## ՀԱՎԵԼՎԱԾ Բ

## ՍԱԿԱԳՆԵՐԻ ՑԱՆԿ

### <u>ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՆՁՎԵԼԻՔ ԱՎԻԱՑԻՈՆ ՎՃԱՐՆԵՐ</u>

Կառավարչի կողմից գանձվելիք վճարներ կլինեն սույն հավելվածում սահմանվածները և ցանկացած այլ վճար, որ հետագայում կարող է նախատեսվել ICAO-ի և IATA-ի կարգավորման ակտերով և առաջարկություններով:

Օդանավակայանի բոլոր վճարներին գումարվում է ԱԱՀ:

ՎԱՅՐԷՋՔԻ ՎՃԱՐ

Վճարները սահմանվում են ըստ օդանավի վերասլացքի հաստատված առավելագույն քաշի:

Ուղևորափոխադրող օդանավ.

5.8 ԱՄՆ դոլար մեկ տոննայի կամ դրա կոտորակի դիմաց

Բեռնափոխադրող օդանավ.

>= 200 տոննա. 3.8 ԱՄՆ դոլար մեկ տոննայի կամ դրա կոտորակի դիմաց
200 - 350 տոննա. 760 ԱՄՆ դոլար + 5.3 ԱՄՆ դոլար 200 տոննան գերազանցող յուրաքանչյուր տոննայի կամ դրա կոտորակի դիմաց

>= 350 տոննա. 1555 ԱՄՆ դոլար + 7.3 ԱՄՆ դոլար 350 տոննան գերազանցող յուրաքանչյուր տոննայի կամ դրա կոտորակի դիմաց

ՎԵՐԱՍԼԱՑՔԻ ՎՃԱՐ

Վճարները սահմանվում են ըստ օդանավի վերասլացքի հաստատված առավելագույն քաշի:

Ուղևորափոխադրող օդանավ.

5.8 ԱՄՆ դոլար մեկ տոննայի կամ դրա կոտորակի դիմաց

Բեռնափոխադրող օդանավ.

>= 200 տոննա. 3.8 ԱՄՆ դոլար մեկ տոննայի կամ դրա կոտորակի դիմաց
200 - 350 տոննա. 760 ԱՄՆ դոլար + 5.3 ԱՄՆ դոլար 200 տոննան գերազանցող յուրաքանչյուր տոննայի կամ դրա կոտորակի դիմաց

>= 350 տոննա. 1555 ԱՄՆ դոլար + 7.3 ԱՄՆ դոլար 350 տոննան գերազանցող յուրաքանչյուր տոննայի կամ դրա կոտորակի դիմաց

Ծանոթագրություններ.
- Բոլոր տեսակի օդանավերի վայրէջքի կամ վերասլացքի յուրաքանչյուր անգամվա նվազագույն վճարը 75 ԱՄՆ դոլար է:
- Վերոհիշյալ կարգով հաշվարկվող վճարի գումարին յուրաքանչյուր անգամ գիշերվա ժամի (21:00-07:00) վայրէջքի կամ վերասլացքի դեպքում հավելվում է 20%

Ավիաընկերությունների (ավիաուղիների) կողմից վճարների վճարումն անհրաժեշտ պայման է թռիչքների թույլատրման և Օդանավակայանի տարածքների ցանկացած օգտագործման համար: Վճարումների չկատարումն իրավունք կտա Կառավարչին արգելելու օդանավակայանային ցանկացած տարածքներից, վերգետնյա տեղերից և ծառայություններից օգտվելը:

## <u>ՕԴԱՆԱՎԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՎՃԱՐՆԵՐ</u>

<u>Ազատ ժամերին կայանման սահմանաչափերը.</u>

| Օդանավի տեսակ | Վայրէջքի առավելագույն քաշ, տոննա | Անվճար կայանման ժամաքանակը |
|---|---|---|
| Մարդատար | <= 115, ներառյալ | 2.5 |
| | >= 115 | 3.0 |
| Բեռնատար | <= 50, ներառյալ | 4.0 |
| | 50 - 100, ներառյալ | 6.0 |
| | 100 - 200, ներառյալ | 8.0 |
| | 200 - 300, ներառյալ | 12.0 |
| | >= 300 | |

Անվճարից դուրս կայանման սահմանաչափերը.

ա) Նախատեսված անվճար կայանման ժամաքանակից ավել կայանող կոմերցիոն օդանավերի վճարներն են.

Վայրէջքի սակագնի 10% մեկ ժամի կամ կոտորակի դիմաց. գործում է նվազագույն ժամավճար՝ 50 ԱՄՆ դոլար մեկ ժամի կամ կոտորակի դիմաց,

բ) Նախատեսված անվճար կայանման ժամաքանակից ավել կայանող ոչ կոմերցիոն օդանավերի վճարներն են.

Վայրէջքի սակագնի 20% մեկ ժամի կամ կոտորակի դիմաց. գործում է նվազագույն ժամավճար՝ 150 ԱՄՆ դոլար մեկ ժամի կամ կոտորակի դիմաց,

Օդանավեր շահագործողների կողմից Օդանավակայանի Վճարների վճարումը էական պայման է՝ թռիչքների թույլատրման և Օդանավակայանի տարածքների ցանկացած օգտագործման համար: Վճարումներից հրաժարումը իրավունք կտա Կառավարչին արգելելու օդանավակայանային ցանկացած տարածքներից, վերգետնյա տեղերից և ծառայություններից օգտվելը:

## ՈՒՂԵՎՈՐԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԱՅԻՆ ՎՃԱՐ

Մեկնող յուրաքանչյուր ուղևորի դիմաց 11 ԱՄՆ դոլար,
Կարանցիկ յուրաքանչյուր ուղևորի դիմաց 5 ԱՄՆ դոլար:

Ծանոթագրություններ.
- Անվճար ճանապարհորդող երեխաների համար օդանավակայանային վճար չի գանձվում,
- Զեղչ գնով ճանապարհորդող երեխաների համար գանձվում է օդանավակայանային վճարի 50%-ը:

## ՏԵԼԵՍԿՈՊԻԿ ԿԱՄՐՋԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ

80 ԱՄՆ դոլար:

Ծանոթագրություն.
- Կամուրջը պետք է պարտադիր կարգով օգտագործվի կցորդման ելք ունեցող կետերում:
- Եթե կամուրջն տրամադրվում է միայն ժամանող կամ միայն մեկնող ուղևորների համար, ապա գանձվող վճարը կազմում է 40 ԱՄՆ դոլար:

Օդանավեր շահագործողների կողմից Օդանավակայանի Վճարների վճարումը էական պայման է՝ թռիչքների թույլատրման և Օդանավակայանի տարածքների ցանկացած օգտագործման համար: Վճարումներից հրաժարումը իրավունք կտա Կառավարչին արգելելու օդանավակայանային ցանկացած տարածքներից, վերգետնյա տեղերից և ծառայություններից օգտվելը:

## ՆՈՐՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՈՒՂԵԲԵՌԻ ՎՃԱՐՆԵՐԸ

Նորման գերազանցող ուղեբեռի յուրաքանչյուր տոննայի դիմաց 100 ԱՄՆ դոլար:
Օդանավեր շահագործողների կողմից Օդանավակայանի Վճարների վճարումը էական պայման է՝ թռիչքների թույլատրման և Օդանավակայանի տարածքների ցանկացած օգտագործման համար: Վճարումներից հրաժարումը իրավունք կտա Կառավարչին արգելելու օդանավակայանային ցանկացած տարածքներից, վերգետնյա տեղերից և ծառայություններից օգտվելը:

## ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐ

| Օդանավի քաշ, տոննաներով | Վճարը, ԱՄՆ դոլարով |
|---|---|
| <= 50 | 32 |
| 50 -100 | 45 |
| 100 - 200 | 54 |
| 200 - 300 | 63 |
| >= 300 | 72 |

Այլընտրանքային էներգամատակարարման (դիզելային և այլն) օգտագործումը կենտրոնացված էներգամատակարարմամբ սնուցվող կայանատեղերում արգելված է:

Ավիաընկերությունների (ավիաուղիների) կողմից վճարների վճարումը անհրաժեշտ պայման է՝ թռիչքների թույլատրման և Օդանավակայանի տարածքների ցանկացած օգտագործման համար: Վճարումներից հրաժարումը իրավունք կտա Կառավարչին արգելելու օդանավակայանային ցանկացած տարածքներից, վերգետնյա տեղերից և ծառայություններից օգտվելը:

## ՕԴԱՆԱՎԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Օդանավի հատուկ անվտանգություն իրականացվում է ավիաընկերության խնդրանքով: Այս ծառայության դիմաց գանձվում է համապատասխան վայրէջքի վճարի 2%-ին համարժեք վճար կայանման մեկ ժամի կամ կոտորակի դիմաց:

Ծանոթագրություններ.
- Նախատեսված ժամաքանակի սահմաններում աէրոդրոմում կայանման դեպքում անվտանգության վճարները ընդգրկված են հետևյալ վճարների մեջ. սահմանված ժամերին կայանման դեպքում՝ վայրէջքի և վերասլացքի վճարներում, իսկ սահմանված ժամերից դուրս կայանման դեպքում՝ կայանման սակագնում (թե սահմանաչափի սահմաններում, և թե դրանից դուրս):
- Տեխնիկական վերանորոգման հատվածներում իրականացվող անվտանգության դիմաց գանձվում է 4.3 ԱՄՆ դոլար մեկ ժամի կամ կոտորակի դիմաց:

Ավիաընկերությունների (ավիաուղիների) կողմից վճարների վճարումը անհրաժեշտ պայման է՝ թռիչքների թույլատրման և Օդանավակայանի տարածքների ցանկացած օգտագործման համար: Վճարումներից հրաժարումը իրավունք կտա Կառավարչին արգելելու օդանավակայանային ցանկացած տարածքներից, վերգետնյա տեղերից և ծառայություններից օգտվելը:

## ՀԱՎԵԼՎԱԾ Գ
## ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ Դ
## <u>ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ, ԳՈՒՅՔԸ</u>